ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ-Ի 22 -Ի ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է աշխատակազմի քարտուղար ԱրաՍուքիասյանը:

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ Է Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյանը:

Նիստին ներկա էին ավագանու 17/տասնյոթ/ անդամներ, բացակայում էին ավագանու 10/տաս/ անդամներ:

Նիստին մասնակցում են Արթիկ համայնքի ավագանու 17/տասնյոթ/ անդամներ՝ Անանիկ Ոսկանյանը, Արթուր Աստոյանը, Արտակ Հարությունյանը, Արման Տոնոյանը, Նարինա Վարդանյանը, Հովհաննես Սահակյանը, Գայանե Մինասյանը, Արտակ Ռափյանը,Ոսկան Վարդանյանը, Ժաննա Ասատրյանը, Մուշեղ Մկրտչյանը, Մարգարիտա Բագդայանը, Արմինե Աղրամանյանը, Էմիլ Գևորգյանը, Վարդուհի Հովհաննիսյանը, Արտյոմ Չարչյանը, Արևիկ Մուրադյանը:

Նիստին ներկա էին համայնքի ղեկավարի տեղակալներ Վարդան Մակեյանը, համայնքի Արտակ Գրիգորյանը, մամուլի քարտուղար Սևակ Պետոյանը, աշխատակազմի քարտուղար Արա Սուքիասյանը, ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի լիազորություններն ու գործառույթները կատարող Էմմա Յայլոյանը,աշխատակազմի, աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման ,տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետի լիազորություններն ու գործառույթները կատարողԱրկադի Թադևոսյանը և այլ աշխատակիցներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ-Ի 22 -Ի ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

/զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

Հաստատել նիստի հետևյալ օրակարգը

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 94-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:/զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

Հարցը դրվեց քվեարկության և ընդունվեց միաձայն:

Օրակարգի հարցը ներկայացրեց ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի լիազորություններն ու գործառույթները կատարող Էմմա Յայլոյանը նշելով, որ ելնելով հանրապետությունում ստեղծված

էքստրեմալ իրավիճակից, համայնքի վարչական տարածքում կուտակված մեծածավալ ձյան մաքրման աշխատանքներ կատարելու համար անհրաժեշտ է բյուջեյի ծախսային մասում կատարել համապատասխան փոփոխություններ նախապես հաստատված 11 միլիոն ՀՀ դրամ գումարին ավելացնել ևս 4 միլիոն ՀՀ դրամ:

Օրակարգի հարցի վերաբերյալ հարցադրումներ ներկայացրեցին ավագանու անդամներ Ոսկան Վարդանյանը, Արման Տոնոյանը որոնց պարզաբանումներ ներկայացրեց և համայնքի տարածքում ստեղծված էքստերմալ իրավիճակը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Վարդան Մակեյանը:Հարցը ամփոփեց համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյանը նշելով բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը, որպեսզի հայտարարվի հրատապ մրցույթ և հաղթող ճանաչված օպերատորի միջոցով իրականացվի ձյան մաքրման աշխատանքները և համայնքի վարչական տարածքում ստեղծվի բնականոն իրավիճակ:Օրակարգի հարցը դրվեց քվեարկության և ընդունվեց միաձայն:

:

Ավագանու անդամներ՝

Կողմ (17) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Աստոյան Արթուր

Հարությունյան Արտակ

Տոնոյան Արման

Վարդանյան Նարինա

Սահակյան Հովհաննես

Մինասյան Գայանե

Ռափյան Արտակ

Վարդանյան Ոսկան

Ասատրյան Ժաննա

Մկրտչյան Մուշեղ

Բագդասյան Մարգարիտա

Ոսկանյան Անանիկ

Աղրամանյան Արմինե

Գևորգյան Էմիլ

Հովհաննիսյան Վարդուհի

Չարչյան Արտյոմ

Արևիկ Մուրադյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա.ՈՍԿԱՆՅԱՆ**